ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՍՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РА
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВОНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

« 04 » հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ ՝ ի.գ. դ.,պրոֆ. Ա.Հ.Դավթյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Քաղաքացիական դատավարություն

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիա

«Քաղաքացիական դատավարություն» դասընթացը՝ իրավաբանական ֆակուլտետների բակալավրիատի ուսումնական ծրագրերին համապատասխան, պարտադիր ուսուցման հենքային դասընթացներից է:

Դասընթացը հնարավորություն է տալիս ուսումնասիրել արդարադատության ձևերից՝ քաղաքացիական գործերով արդարադատությունը, նրա իրականացման փուլերը, քաղաքացիական գործերի առանձին տեսակները, քաղաքացիական դատավարության սկզբունքները, ներկայացուցչության, ընդդատության ինստիտուտները, ապացույցները, հայցի ուսումնասիրությունն ու տեսակները, դատարանում գործին մասնակցող անձանց դատավարական պաշտպանության միջոցները, դատական ակտերի բողոքարկման և դասընթացում ներառված այլ մասնագիտական հարցեր:

Ուշագրավ է, որ «Քաղաքացիական դատավարություն» դասընթացի ուսումնասիրությունն իրականացվում է քաղաքացիական դատավարության տարբեր իրավական ինստիտուտների մասին պատմական զարգացման մասին գիտելիքների զուգորդմամբ, որի ընթացքում ուսանողը լիարժեք կերպով տեղեկանում է նաև Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական դատավարության ոլորտում իրականացված և իրականացվող դատաիրավական բարեփոխումների ժամանակ բազմաթիվ դատաիրավական գործընթացների հետ, գիտելիքներ ձեռք բերելով նաև ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքերի՝ պատմական համակարգումների և քաղաքացիական դատավարության գործող համակարգման, գործող օրենսգրքի ստեղծման և նրա գործածության արդյունավետության մասին:

Բացի դրանից, դասավանդման գործընթացում՝ սեմինար և լաբորատոր գործնական աշխատանքների ընթացքում, պարտադիր է դառնում քաղաքացիական գործերով դատավարական փաստաթղթեր կազմումը և ՀՀ դատական համակարգի տարբեր դատարանների քաղաքացիական գործերի՝ դատական դեպքերի, դատական պրակտիկայի հետ ծանոթացումը և վերլուծությունը, դատավարական տարբեր խնդիրների առաջադրումը և դրանց լուծման ուղիներին վերաբերող քննարկումների անցկացումը:

Դասընթացը միաժամանակ ենթադրում է նայ քաղաքացիական դատավարության ոլորտում օրենսդրական փոփոխությունների յ լրացումների հետ ծանոթացումն ու անհրաժեշտ բանավեճերը:

I. Դասընթացի նպատակը յ խնդիրները

«Քաղաքացիական դատավարություն» դասընթացի նպատակը իրավաբանական ֆակուլտետների բակալավրիատի բաժնի ուսանողներին քաղաքացիական դատավարության իրավունքի դասավանդումն է, քաղաքացիական գործերով արդարադատության իրականացման և դրա դատավարական գործընթացների մասին առավելագույն տեսագործնական գիտելիքների հաղորդումը և այդ ոլորտում համապատասխան մասնագիտական գիտելիքների ձևավորումը:

Դասընթացի խնդիրներն են՝

- Քաղաքացիական դատավարության իրավունքի, նրա համակարգի, իրավունքի աղբյուրների, սկզբունքների, ինչպես նաև դրա կողմից կարգավորվող դատավարական իրավահարաբերությունների առանձնահատկությունների ուսումնասիրումը:
- Քաղաքացիական դատավարության և քաղաքացիական գործերով արդարադատության իրականացման և նրա ինստիտուտների մասին մասնագիտական գիտելիքների փոխանցումը:
- Քաղաքացիական դատավարության ոլորտի հատուկ մասնագիտական տերմինաբանության բացատրությունը և դրա յուրացմանը նպաստելը:
- Դատական պրակտիկայի, դատական նախադեպերի վերլուծություն իրականացնելու կարողությունների ձևավորումը:
- Դատավարական մտածողության և դատավարական կողմնորոշման ձևավորումը:

II. Դասընթացի օբյեկտը յ առարկան

Դասընթացի օբյեկտը՝ քաղաքացիական դատավարության իրավունքն է որպես իրավունքի ճյուղ և այն դատավարական իրավահարաբերությունները, որոնք առաջանում են քաղաքացիական գործեր քննող դատարաններում դատավարության

մասնակիցների միջև տարաբնույթ տեսակի քաղաքացիական գործերով՝ հայցային վարույթի, հատուկ հայցային վարույթի և հատուկ վարույթի շրջանակներում և այդ գործերով դատական ակտերի բողոքարկման առնչությամբ վերադաս դատական ատյաններում:

Դասընթացի առարկան է՝ քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանության ձևը:

Դասընթացի առարկան կազմող տարրերն են հանդիսանում՝

- քաղաքացիական դատավարության իրավունքը,
- քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրները,
- քաղաքացիական դատավարության իրավունքը կազմող նորմատիվ իրավական ակտերը,
- քաղաքացիական իրավունքի իրացումը քաղաքացիական գործերով դատական պրակտիկայի միջոցով,
- քաղաքացիական դատավարության տեսական հասկացությունները և ժամանակակից հայեցակարգերը:

I. Դասընթացի մուտքային պահանջները

Դասընթացի ուսումնասիրման մուտքային պահանջներն են՝ ուսանողների մոտ իրավագիտության ոլորտում անհրաժեշտ ընդհանուր մասնագիտական գիտելիքների առկայությունը, մասնավորապես՝ պետության և իրավունքի տեսության, սահմանադրական իրավունքի, քաղաքացիական իրավունքի իմացությունը:

II. Դասընթացի յուրացման արդյունքում ձեռքբերվող գիտելիքները ֆ կարողությունները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է իմանա՝

- Քաղաքացիական դատավարության իրավունքի ոլորտը կարգավորող ներազգային և միջազգային իրավական ակտերը:
- Քաղաքացիական դատավարության ընդհանուր դատավարական և ճյուղային սկզբունքները:

- Քաղաքացիական դատավարության ինստիտուտները:
- Քաղաքացիական դատավարության վարույթի տեսակները:
- Քաղաքացիական դատավարության ընթացակարգն ու նրա բոլոր փուլերն ու ենթափուլերը:
- Դատական ակտերի բողոքարկման ընթացակարգը և դատական ատյանների լիազորությունները:

Կարողանա՝

- Կողնորոշվել քաղաքացիական գործերով արդարադատության գործընթացներում:
- Կողնորոշվել քաղաքացիական գործերով վարույթի տեսակներում, ապացուցման գործընթացում:
- Կողնորոշվել դատական ակտերի բողոքարկման գործընթացներում:
- Վերլուծել քաղաքացիական գործերով դատական պրակտիկան և դատական նախադեպերը:

Ունակ լինի՝

- Մեկնաբանել քաղաքացիական դատավարության օրենսդրության դրույթները:
- Վերլուծել գործնական դատավարական խնդիրներ:
- Կատարել տարբեր տեսական ուսումնասիրություններ քաղաքացիական դատավարության ոլորտում:
- Հասկանալ և քննարկել տվյալ ոլորտում օրենսդրական փոփոխությունները:

III. Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխանությունը ՈԱՇ-ի վերջնարդյունքներին

Գիտելիք յ իմացություն՝

- Քաղաքացիական դատավարության՝ որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության դատական ձևի և նրա առանձնահատկությունների իմացությունը:
- Քաղաքացիական դատավարության օրենսգրքի և այլ իրավական ակտերում դատավարական իրավադրույթների իմացությունը:

- Քաղաքացիական դատավարության փուլերի իմացությունը:
- Քաղաքացիական գործերի քննության տեսակների և նրանց քննության առանձնահատկությունների իմացությունը:
- Դատական ակտերի բողոքարկման ընթացակարգի մասին իմացությունը:
- Իրավակիրարման՝ դատական գործերով իրավաբանական փաստերի վերլուծության, դատավարական նորմերի մեկնաբանման, դատավարական կոլիզիաները լուծելու կանոնների իմացությունը:

Հմտությունները՝

Գիտելիքների կիրառման հմտությունները՝

- Կարող է կիրառել քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթները իրավաբանական պրակտիկայի տարբեր ոլորտներում:
- Կարող է կիրառել դատական պրակտիկան և դատական նախադեպերը նույնանման քաղաքացիական գործերով:
- Կարող է կիրառել ձեռք բերված գիտելիքները օրենսդրական փոփոխությունների վերաբերող գործընթացներին և իրավաստեղծ աշխատանքներին:
- Կարող է կիրառել ձեռք բերված գիտելիքները տեսական և գիտաուսումնական աշխատանքներում և ծրագրերում:

Ընդհանրական իմացական հմտությունները՝

- Դատավարական խնդիրների լուծման հմտություն:
- Դատավարության նորմերի վերլուծության հմտություն:
- Դատավարական օրենսդրության մեկնաբանման հմտություն:
- Դատավարական փաստաթղթեր կազմման հմտություն:
- Գիտակրթական ուսումնասիրությունների իրականացման հմտություն:

Կարողությունները (կոմպետենցիաները)՝

Ինքնուրույնությունը և պատասխանատվությունը

- Ունակ է ինքնուրույն հասկանալ և մեկնաբանել քաղաքացիական դատավարության օրենսդրությունը և նրա առանձին ինստիտուտներին վերաբերող դրույթները:

- Ունակ է մասնակցել պրակտիկայում քաղաքացիական դատավարական գործընթացներին, կատարել դատավարական հանձնարարություններ, կազմել դատավարական փաստաթղթեր:
- Ունակ է կատարել և մասնակցել տվյալ ոլորտում տեսական, գիտական ուսումնասիրություններին և իրավաստեղծ աշխատանքներին, օրենսդրական նախագծերի ստեղծմանը:

I. Դասավանդման եղանակները ֆ մեթոդները

Առարկայի դասավանդումն իրականացվում է հետևյալ մեթոդներով՝ դասախոսությունների, գործնական պարապմունքների, դատախաղերի, լաբորատոր աշխատանքների, քննարկումների, անհատական և ինքնուրույն աշխատանքների միջոցով:

Գործնական պարապմունքների անցկացումը կոնկրետ թեմաների վերաբերյալ, որի ժամանակ ուսանողները պետք է ելույթներ ունենան նախապես հանձնարարած թեմաների հարցերի շուրջ, հանդիսանում է նրանց գիտելիքների ստուգման հիմնական ձևերից մեկը:

Դատավարական տարբեր խնդիրների լուծումը և օրենսդրական փոփոխություններին վերաբերող նախագծերի քննարկումը գործնական պարապմունքների ժամանակ գիտելիքների ստուգման հաջողված մեթոդներից ևս մեկն է:

Լաբորատոր պարապմունքների անցկացումը դատավարական տարբեր փաստաթղթեր կազմելու հմտություններ ձեռք բերելու համար, նպաստում է ուսանողների մոտ գիտելիքների հարստացմանը:

Բացի դրանից, դասավանդման անհրաժեշտ մեթոդներից է նաև ՀՀ դատական համակարգի տարբեր դատարանների քաղաքացիական գործերի՝ դատական դեպքերի, դատական պրակտիկայի հետ ծանոթացումը, վերլուծությունը և խմբային քննարկումները:

Գիտելիքների ստուգման հիմնական ձևերից է մոդուլների կամ ընթացիկ ստուգումների անցկացումը, ստուգարքը և քննությունը, որոնց ժամանակ հնարավոր գիտելիքների ստուգման մեթոդներից է թեստավորումը կամ երկու-երեք մասնագիտական

հարցի առաջադրումը ուսանողին, որի պատասխանից կախված է նրա գնահատման արդյունքը:

Գործնական պարապմունքների ժամանակ կարևոր է նաև հետաքրքիր մասնագիտական թեմաներից զեկուցումների և ռեֆերատների հանձնարարումը ուսանողներին և դրանց քննարկումը սեմինար կամ լաբորատոր պարապմունքների ժամանակ:

Գիտելիքների ամրապնդման, հմտություններ ձեռք բերելու և ձևավորման ձևերից է նաև դատախաղերի անցկացումը՝ այդ նպատակի համար հատկացված բուհում գործող դատարանի դահլիճը:

II. Դասընթացի տեղը ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «6» ակադեմիական կրեդիտ (216 ակադեմիական ժամ), որից 64 ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել երրորդ ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**216**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**128**
1.1.1. Դասախոսություններ	**64**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**64**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	**64**
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**88**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	**63**
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	**25**

1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	10
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	15
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	Ստուգարք գնահատակա նով (1 կիսամ.) քննություն (2 կիսամյակ)

I. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների ֆ ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Բաժին I. Քաղաքացիական դատավարության ընդհանուր բնութագիրը **Թեմա 1.**Քաղաքացիական դատավարությունը՝ որպես արդարադատության իրականացման ձև	8	4	4
Թեմա 2.Քաղաքացիական դատավարության իրավունքի հասկացությունը և համակարգը:	6	3	3
Թեմա 3. Քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրները:	6	3	3
Թեմա 4.Քաղաքացիական դատավարության սկզբունքները:	6	3	3

Թեմա 5.Քաղաքացիական դատավարական իրավահարաբերություններ:	6	3	3
Թեմա 6.Կողմերը քաղաքացիական դատավարությունում:	6	3	3
Թեմա 7.Երրորդ անձինք քաղաքացիական դատավարությունում:	4	2	2
Թեմա 8.Դատական ներկայացուցչություն:	4	2	2
Թեմա 9.Դատախազի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը:	4	2	2
Թեմա 10.Քաղաքացիական գործերի ենթակայությունը և ընդդատությունը:	6	3	3
Թեմա 11.Դատավարական ժամկետներ:	4	2	2
Թեմա 12.Դատական ծախսեր:	4	2	2
Թեմա 13.Ապացուցումը քաղաքացիական դատավարությունում:	8	4	4
Թեմա 14.Ապացույցները քաղաքացիական դատավարությունում:	6	3	3
ԲաժինII. Քաղաքացիական դատավարության իրականացման ընթացակարգը **Թեմա 15.**Հայցային վարույթ: Հայցը և նրա տեսակները քաղաքացիական դատավարությունում:	6	3	3

Թեմա 16.Հատուկ հայցային վարույթ:	6	3	3
Թեմա 17.Հատուկ վարույթ:	6	3	3
Թեմա 18.Քաղաքացիական գործերի քննության կարգը առաջին ատյանի դատարանում:	4	2	2
Թեմա 19.Առաջին ատյանի դատարանի դատական ակտերը:	4	2	2
Թեմա 20.Քաղաքացիական գործերով դատաքննության պարզեցված ընթացակարգերը:	4	2	2
Թեմա 21.Վարույթը վերաքննիչ դատարանում:	4	2	2
Թեմա 22Վարույթը վճռաբեկ դատարանում:	4	2	2
Թեմա 23.Դատական ակտերի վերանայման վարույթը նոր երևան եկած և նոր հանգամանքներով:	4	2	2
Թեմա 24. Օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի վարույթը:	4	2	2
Թեմա25. Դատական ակտերի կատարումը: Կատարողական վարույթի ընդհանուր բնութագիրը:	4	2	2
Ընդամենը	128	64	64

II. Դասընթացի թեմաների բովանդակությունը

Բաժին I. Քաղաքացիական դատավարության ընդհանուր բնութագիրը

Թեմա 1. Քաղաքացիական դատավարությունը՝ որպես արդարադատության իրականացման ձյ

- Քաղաքացիական իրավունքների պաշտպանության դատական ձևը:
- Քաղաքացիական գործեր քննող դատարանները և նրանց դատավարական իրավասությունները:
- Քաղաքացիական դատավարության հասկացությունը: Դատավարական ձևը և նրա առանձնահատկությունները:
- Քաղաքացիական դատավարության փուլերը:
- Քաղաքացիական դատավարության վարույթի հասկացությունը և տեսակները:

Թեմա 2. Քաղաքացիական դատավարության իրավունքը

- Քաղաքացիական դատավարության իրավունքի հասկացությունը և համակարգը:
- Քաղաքացիական դատավարության իրավունքի դիսպոզիտիվ-իմպերատիվ մեթոդը:
- Քաղաքացիական դատավարության իրավունքի կապը իրավունքի մյուս ճյուղերի հետ:
- Քաղաքացիական դատավարական իրավանորմերի ներգործությունը տարածության վրա և ժամանակի մեջ:

Թեմա 3. Քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրները

- Քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրների հասկացությունը և դասակարգումը՝ ներպետական և միջազգային աղբյուրների:
- ՀՀ ներպետական իրավական ակտերը՝ որպես քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրներ:
- ՀՀ միջազգային իրավական ակտերը՝ որպես քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրներ:
- ՀՀ ներպետական և միջազգային նախադեպերը՝ որպես քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրներ:

Թեմա 4. Քաղաքացիական դատավարության սկզբունքները

- Քաղաքացիական դատավարության սկզբունքների հասկացությունը և դասակարգումը:

- Քաղաքացիական դատավարության սահմանադրական (ընդհանուրտատավարական) և ճյուղային սկզբունքները:
- Սկզբունքների նշանակությունը քաղաքացիական գործերով արդարադատության իրականացման համար:

Թեմա 5. Քաղաքացիական դատավարական իրավահարաբերություններ

- Քաղաքացիական դատավարական իրավահարաբերությունների հասկացությունը և առանձնահատկությունները:
- Քաղաքացիական դատավարական իրավահարաբերությունների ծագման հիմքերը:
- Քաղաքացիական դատավարական իրավահարաբերությունների սուբյեկտների հասկացությունը և նրանց դասակարգումը:

Թեմա 6. Կողմերը քաղաքացիական դատավարությունում

- Կողմերի հասկացությունը և նրանց դատավարական իրավունքներն ու պարտականությունները:
- Դատակցության հասկացությունը և տեսակները:
- Անպատշաճ կողմից փոխարինումը:
- Դատավարական իրավահաջորդություն:

Թեմա 7. Երրորդ անձինք քաղաքացիական դատավարությունում

- Երրորդ անձանց հասկացությունը և տեսակները
- Վեճի առարկային կատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք
- Վեճի առարկային կատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք
- Երրորդ անձանց դատավարական նշանակությունը և նպատակը քաղաքացիական գործերով

Թեմա 8. Դատական ներկայացուցչություն

- Դատական ներկայացուցչության նշանակությունը և դատավարական նպատակները քաղաքացիական դատավարությունում
- Դատական ներկայացուցչության տեսակները (օրինական, պայմանագրային, հասարակական)

Թեմա 9. Դատախազի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը

- Դատախազի կարգավիճակը քաղաքացիական դատավարությունում և դատավարական նպատակները
- Պետական շահերի պաշտպանության նպատակով քաղաքացիական գործերով դատարանում հայց ներկայացնելը
- Ապօրինի գույքի բռնագանձման հայց ներկայացնելը

Թեմա 10. Քաղաքացիական գործերի ենթակայությունը ֆ ընդդատությունը

- Դատական ենթակայության և ընդդատության հասկացությունը և դրանց տարբերությունները
- Ընդդատության դատավարական նպատակները և նրա տեսակները
- Առարկայական ընդդատություն, հասկացությունը և դատավարական նշանակությունը
- Տարածքային ընդդատության հասկացությունը, տեսակները (ընդհանուր տարածքային, այլընտրանքային կամ տարածքային ընդդատությունը հայցվորի ընտրությամբ, բացառիկ տարածքային ընդդատություն) և նրանց դատավարական նշանակությունը
- Պայմանագրային ընդդատություն, հասկացությունը, նշանակությունը
- Քաղաքացիական գործի հաձնումը մեկ դատարանից մեկ այլ դատարան

Թեմա 11. Դատավարական ժամկետներ

- Դատավարական ժամկետների հասկացությունը և տեսակները
- Օրենքով սահմանված դատավարական ժամկետներ
- Դատարանի կողմից նշանակված դատավարական ժամկետներ
- Դատավարական ժամկետներ հաշվելը, դրանց կասեցումը և վերականգնումը

Թեմա 12. Դատական ծախսեր

- Դատական ծախսերի հասկացությունը և տեսակները
- Գործի քննության հետ կապված ծախսեր
- Պետական տուրք
- Դատական ծախսերը կարգավորող իրավական ակտերը

Թեմա 13. Ապացուցումը քաղաքացիական դատավարությունում

- Դատական ապացուցման հասկացությունը և փուլերը. ապացույցների հավաքումը, դրանք ներկայացնելը, ապացույցների հետազոտումը և գնահատումը որպես դատական ապացուցման գործընթացի փուլեր: Ապացույցների ազատ գնահատման սկզբունքը
- Դատական ապացուցման ընդհանուր կանոնները. ապացույցների վերաբերելիությունը, թույլատրելիությունը, արժանահավատությունը և բավարար լինելը
- Ապացուցման պարտականությունը քաղաքացիական դատավարությունում. ապացուցման պարտականությունը բաշխելու մասին դատարանի որոշումը
- Ապացուցման առարկան. գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի և ապացուցման ենթակա փաստերի՝ ապացուցման առարկայի շրջանակը որոշելը

Թեմա 14. Ապացույցները քաղաքացիական դատավարությունում

- Դատական ապացույցների հասկացությունը և դասակարգումը. ուղղակի և անուղղակի ապացույցներ (դասակարգումը ըստ ապացույցի և ապացուցվող փաստի միջև եղած կապի), անձնական, իրեղեն և խառը տիպի ապացույցներ (դասակարգումը ըստ ապացույցի առաջացման աղբյուրի), բնօրինակներ և պատճեներ, սկզբնական և ածանցյալ ապացույցներ (դասակարգումը ըստ ապացույցի ձևավորման ընթացակարգի)
- Ապացույցների տեսակները, հասկացությունը. վկայիցուցմունքը, գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները, լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրությունները և տեսագրությունները, փորձագետի եզրակացությունը, մասնագետի բացատրությունը

Բաժին 2. Քաղաքացիական դատավարության իրականացման ընթացակարգը

Թեմա 15. Հայցային վարույթ

- Հայցային վարույթի և հայցի հասկացությունը
- Հայցի տարրերը և հայցի հարուցման իրավունքը
- Հայցերի դասակարգումը
- Հայցի պաշտպանության դատավարական միջոցների տնօրինումը և հայցից պատասխանողի պաշտպանվելու դատավարական միջոցները

- Հայցի ապահովումը. հասկացությունը, ընթացակարգը, դատավարական միջոցները

Թեմա 16. Հատուկ հայցային վարույթ

- Հատուկ հայցային վարույթի ընդհանուր բնութագիրը
- Հատուկ հայցային վարույթի գործերի տեսակները և դրանց քննության ընթացակարգը
- Կորպորատիվ և խմբային հայցեր

Թեմա 17. Հատուկ վարույթ

- Հատուկ վարույթի ընդհանուր բնութագիրը
- Հատուկ վարույթի գործերի տեսակները և դրանց քննության ընթացակարգը
- Հատուկ վարույթի գործերով արտադատական կարգի պահպանման անհրաժեշտությունը

Թեմա 18. Քաղաքացիական գործերի քննության կարգը առաջին ատյանի դատարանում

- Քաղաքացիական գործի հարուցումը դատարանում
- Քաղաքացիական գործը դատաքննության նախապատրաստելը. նախնական դատական նիստ
- Դատաքննություն
- Դատական ակտի կայացում և հրապարակում

Թեմա 19. Առաջին ատյանի դատարանի դատական ակտերը

- Դատական ակտերի հասկացությունը և տեսակները
- Դատական վճռին ներկայացվող պահանջները և բովանդակությունը
- Վճռի թերությունների վերացումը

Թեմա 20. Քաղաքացիական գործերով դատաքննության պարզեցված ընթացակարգերը

- Հեռակա դատաքննություն. հասկացությունը, ընթացակարգը
- Արագացված դատաքննություն. հասկացությունը, ընթացակարգը
- Պարզեցված վարույթ. հասկացությունը, ընթացակարգը
- Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը

Թեմա 21. Վարույթը վերաքննիչ դատարանում

- Վերաքննիչ վարույթի ընդհանուր բնութագիրը և վերաքննիչ բողոքարկման իրավունքը
- Վերաքննիչ բողոք ներկայացնող սուբյեկտները
- Վերաքննիչ բողոք բերելու կարգը
- Դատաքննությունը վերաքննիչ դատարանում
- Վերաքննիչ դատարանի լիազորությունները
- Վերաքննիչ դատարանի դատական ակտերը

Թեմա 22. Վարույթը վճռաբեկ դատարանում

- Վճռաբեկ վարույթի ընդհանուր բնութագիրը և վճռաբեկ բողոքարկման իրավունքը
- Վճռաբեկ բողոք ներկայացնող սուբյեկտները
- Վճռաբեկ բողոք բերելու կարգը
- Դատաքննությունը վճռաբեկ դատարանում
- Վճռաբեկ դատարանի լիազորությունները

Թեմա 23. Դատական ակտերի վերանայման վարույթը նոր երյան եկած յ նոր հանգամանքներով

- Նոր երևան եկած և նոր հանգամանքների հասկացությունը և դրանց տարբերությունը դատավարական հետևանքներում
- Դատական ակտերը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայող դատարանները և նրանց լիազորությունները
- Դատական ակտերը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման վարույթի հասկացությունը, առարկան և հիմքերը
- Դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու վարույթով դատաքննությունը

Թեմա 24. Օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի վարույթը

- Օտարերկրյա անձանց դատավարական իրավունքները և պարտականությունները
- Օտարերկրյա անձանց մասնակցությամբ ընդդատությունը
- Օտարերկրյա պետության և միջազգային կազմակերպության դեմ ներկայացվող հայցերը

Թեմա 25. Դատական ակտերի կատարումը. կատարողական վարույթի ընդհանուր բնութագիրը

- Դատական ակտերի հարկադիր կատարումը կատարողական վարույթում և նրա կապը քաղաքացիական դատավարության հետ
- Կատարողական վարույթի հասկացությունը. կատարողական վարույթը կարգավորող իրավական ակտերը
- Կատարողական վարույթի ընթացակարգը և սուբյեկտները

Թեմա 18. Քաղաքացիական գործերի քննության կարգը առաջին ատյանի դատարանում

- Քաղաքացիական գործի հարուցումը դատարանում
- Քաղաքացիական գործը դատաքննության նախապատրաստելը. նախնական դատական նիստ
- Դատաքննություն
- Դատական ակտի կայացում և հրապարակում

Թեմա 19. Առաջին ատյանի դատարանի դատական ակտերը

- Դատական ակտերի հասկացությունը և տեսակները
- Դատական վճռին ներկայացվող պահանջները և բովանդակությունը
- Վճռի թերությունների վերացումը

Թեմա 20. Քաղաքացիական գործերով դատաքննության պարզեցված ընթացակարգերը

- Հեռակա դատաքննություն. հասկացությունը, ընթացակարգը
- Արագացված դատաքննություն. հասկացությունը, ընթացակարգը
- Պարզեցված վարույթ. հասկացությունը, ընթացակարգը
- Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը

Թեմա 21. Վարույթը վերաքննիչ դատարանում

- Վերաքննիչ վարույթի ընդհանուր բնութագիրը և վերաքննիչ բողոքարկման իրավունքը
- Վերաքննիչ բողոք ներկայացնող սուբյեկտները
- Վերաքննիչ բողոք բերելու կարգը
- Դատաքննությունը վերաքննիչ դատարանում
- Վերաքննիչ դատարանի լիազորությունները

- Վերաքննիչ դատարանի դատական ակտերը

Թեմա 22. Վարույթը վճռաբեկ դատարանում

- Վճռաբեկ վարույթի ընդհանուր բնութագիրը և վճռաբեկ բողոքարկման իրավունքը
- Վճռաբեկ բողոք ներկայացնող սուբյեկտները
- Վճռաբեկ բողոք բերելու կարգը
- Դատաքննությունը վճռաբեկ դատարանում
- Վճռաբեկ դատարանի լիազորությունները

Թեմա 23. Դատական ակտերի վերանայման վարույթը նոր երյան եկած յ նոր հանգամանքներով

- Նոր երևան եկած և նոր հանգամանքների հասկացությունը և դրանց տարբերությունը դատավարական հետևանքներում
- Դատական ակտերը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայող դատարանները և նրանց լիազորությունները
- Դատական ակտերը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման վարույթի հասկացությունը, առարկան և հիմքերը
- Դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու վարույթով դատաքննությունը

Թեմա 24. Օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի վարույթը

- Օտարերկրյա անձանց դատավարական իրավունքները և պարտականությունները
- Օտարերկրյա անձանց մասնակցությամբ ընդդատությունը
- Օտարերկրյա պետության և միջազգային կազմակերպության դեմ ներկայացվող հայցերը

Թեմա 25. Դատական ակտերի կատարումը. Կատարողական վարույթի ընդհանուր բնութագիրը

- Դատական ակտերի հարկադիր կատարումը կատարողական վարույթում և նրա կապը քաղաքացիական դատավարության հետ
- Կատարողական վարույթի հասկացությունը. կատարողական վարույթը կարգավորող իրավական ակտերը
- Կատարողական վարույթի ընթացակարգը և սուբյեկտները

II. Քննության հարցաշարի օրինակ:

1. Դատական ենթակայություն և ընդդատություն: Հասկացությունը, դատավարական ինստիտուտների իրավակարգավորումն ու տարբերությունները:
2. Տարածքային ընդդատության հասկացությունը, տեսակները, դատավարական նպատակը:
3. Բացառիկ տարածքային ընդդատություն, հասկացությունը, դատավարական նպատակը:
4. Տարածքային ընդդատությունը հայցվորի ընտրությամբ (այլընտրանքային) ընդդատություն:
5. Պայմանագրային ընդդատություն:
6. Գործի հանձնումը մեկ դատարանից մեկ այլ դատարան: Ընդդատության և ենթակայության մասին վեճերը և իրավակարգավորումները:
7. Դատավարական իրավահաջորդություն, հասկացությունը, դատավարական նպատակը:
8. Ապացույցի հասկացությունը: Ուղղակի և անուղղակի, սկզբնական և ածանցյալ ապացույցներ:
9. Ապացույցներ ներկայացնելը և ապացուցման պարտականությունը քաղաքացիական դատավարությունում: Ապացույցների վերաբերյալության, թույլատրելիության, դատավարական կանոնները:
10. Ապացույցների գնահատումը քաղաքացիական դատավարությունում: Գործին մասնակցող անձանց և դատարանի մասնակցությունը ապացույցների գնահատման գործընթացում:
11. Ապացուցման առարկան, հասկացությունը և ապացուցման առարկան կազմող փաստերը: Ապացուցման ենթակա և ապացուցման կարիք չունեցող փաստերը և դրանց իրավական հիմքերը:
12. Ապացուցման հասկացությունը, ապացուցման գործընթացին մասնակցող սուբյեկտները: Ապացուցման փուլերը:
13. Ապացույցների ապահովումը, իրականացման դատավարական միջոցները և ընթացակարգը:

14. Վկայի ցուցմունքը քաղաքացիական դատավարությունում, հետազոտումը և գնահատումը: Առերես հարցաքննություն:
15. Գործին մասնակցող անձի՝ որպես վկայի ցուցմունք դատարանում, նրա հետազոտումը և գնահատումը:
16. Գրավոր ապացույցները, հասկացությունը, տեսակները:
17. Իրեղեն ապացույցները, հասկացությունը, հետազոտումը և գնահատումը:
18. Լուսանկարները, լուսաժապավենները, ձայնագրություններն ու տեսագրությունները որպես ապացույցներ: Հասկացությունը, ներկայացման կարգը, հետազոտման և գնահատման իրավակարգավորումները:
19. Փորձագետի եզրակացությունը որպես ապացույցի տեսակ, փորձագիտական եզրակացության բովանդակությունը, տեսակները, դատարանում հետազոտման և գնահատման կարգը:
20. Փորձաքննության և փորձագետի հասկացությունը, փորձաքննության նշանակման դատավարական և անցկացման կարգը: Լրացուցիչ և կրկնակի փորձաքննություն:
21. Գործին մասնակցող անձի մասնակցությունը փորձաքննությանը և նրա կողմից ներկայացրած փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակությունը:
22. Մասնագետի հարցաքննությունը որպես ապացույց, հասկացությունը, հետազոտման և գնահատման դատավարական կարգը: Դատական ապացուցման հասկացությունը, փուլերը (ապացույցներ ներկայացնելը, հետազոտումը, ուսումնասիրությունն ու գնահատումը):
23. Դատաքննությունը առաջին ատյանի դատարանում: Դատական նիստի բաղկացուցիչ մասերը և դրանց անցկացման ընդհանուր դատավարական կանոնները:
24. Քաղաքացիական գործը դատական քննության նախապատրաստելը: Նախնական դատական նիստը:
25. Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի տեսակները: Դատական ակտերում թույլ տված վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալների ուղղումը:
26. Դատական վճռի հասկացությունը և բովանդակությունը, օրինական ուժը: Լրացուցիչ վճիռ:

27. Դատական ակտերի բողոքարկումը վերաքննության կարգով, սուբյեկտները, իրավական հիմքերը:
28. Բողոքի քննության գրավոր և բանավոր ընթացակարգը վերաքննիչ դատարանում:
29. Վերաքննիչ դատարանի լիազորությունները և դատական ակտերը:
30. Դատական ակտերի բողոքարկումը վճռաբեկության կարգով, սուբյեկտները, իրավական հիմքերը:
31. Բողոքի քննության գրավոր և բանավոր ընթացակարգը վճռաբեկ դատարանում:
32. Վճռաբեկ դատարանի լիազորությունները և դատական ակտերը:
33. Դատական ակտը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու վարույթը, սուբյեկտները, իրավական հիմքերը:
34. Արագացված դատաքննություն: Հասկացությունը, քաղաքացիական գործերի քննության կարգը, դատավարական նպատակը:
35. Հեռակա դատաքննություն: Հասկացությունը, քաղաքացիական գործերի քննության կարգը, դատավարական նպատակը:
36. Քաղաքացիական գործերի քննությունը պարզեցված վարույթի կարգով:
37. Կատարողական վարույթի հասկացությունը, սուբյեկտները: Դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենսդրությունը:
38. Հայցային վարույթի հասկացությունը: Հայցադիմումի ձևը, բովանդակությունը, ներկայացնելու դատավարական կարգը և դրանք չպահպանելու իրավական հետևանքները քաղաքացիական դատավարությունում:
39. Հայցի ապահովման, հակընդդեմ ապահովման հասկացությունը, դատավարական միջոցները և նպատակը քաղաքացիական դատավարությունում:
40. Կատարողական հայցերը քաղաքացիական դատավարությունում:
41. Ճանաչողական հայցերը քաղաքացիական դատավարությունում:
42. Վերափոխիչ հայցերը քաղաքացիական դատավարությունում:
43. Խմբային հայցերը քաղաքացիական դատավարությունում, հասկացությունը, օրենսդրական կարգավորումները:
44. Հայցվորի և պատասխանողի պաշտպանության դատավարական միջոցները հայցային և հատուկ հայցային վարույթներում:

45. Հայցադիմումը վարույթ ընդունելը, հայցադիմումի ընդունումը մերժելը, հայցադիմումը վերադարձնելը:
46. Հայցի հասկացությունը, տարրերը: Հայցի առարկան և հիմքի փոփոխման դատավարական ընթացակարգը:
47. Ընտանեկան գործերով վարույթը:
48. ՀՀ-ում անօրինական տեղափոխված կամ ՀՀ-ում անօրինական պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործերի վարույթը:
49. Առանձին աշխատանքային գործերով վարույթը:
50. Կորպորատիվ վեճերով գործերի վարույթը:
51. Խմբային հայցի հիման վրա քննվող գործերը:

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերի վարույթը:

Շարժական գույքը տիրազուրկ ճանաչելու և դրա նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելու գործերի վարույթը:

Անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (էմանսիպացիա) գործերի վարույթը:

Քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու գործերի վարույթը:

Քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու գործերի վարույթը:

Երեխայի որդեգրման վերաբերյալ գործերի վարույթը:

Քաղաքացուն հոգեբուժական կազմակերպության ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթը:

Քաղաքացուն բժշկական ոչ հոժարակամ հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթը:

Ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթերով հավաստված իրավունքները վերականգնելու գործերը:

Հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման վերաբերյալ գործերը:

Արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արդատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու գործերը:

Հաշտարարությունը քաղաքացիական դատավարությունում, օրենսդրական իրավակարգավորումները և դատավարական նպատակը:

Գործերի քննությունը պարզեցված վարույթի կարգով:

Հաշտության համաձայնությունը քաղաքացիական դատավարությունում: Դատարանի վճիռը:

1. **III. Քննական տոմսի օրինակ**
2. **Քննական տոմս**
3. **Դատական ենթակայություն ֆ ընդդատություն: Հասկացությունը, դատավարական ինստիտուտների իրավակարգավորումներն ու տարբերությունները:**
4. **Դատական ապացուցման հասկացությունը, փուլերը:**
5. **Հայցվորի ֆ պատասխանողի պաշտպանության դատավարական միջոցները հայցային ֆ հատուկ հայցային վարույթներում:**
6. **IV. Կուրսային աշխատանքների թեմաների ցանկ**
7. **Քաղաքացիական դատավարության վարույթի տեսակները:**
8. **Քաղաքացիական դատավարության սկզբունքները:**
9. **Գործին մասնակցող անձինք քաղաքացիական դատավարությունում:**
10. **Ապացուցումը ֆ ապացույցները քաղաքացիական դատավարությունում:**
11. **Ներկայացուցչությունը քաղաքացիական դատավարությունում:**
12. **Դատախազի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը:**
13. **Քաղաքացիական գործերի քննության կարգը առաջին ատյանի դատարանում:**
14. **Դատական ակտերի բողոքարկումը վերաքննիչ դատարանում:**
15. **Դատական ակտերի բողոքարկումը վճռաբեկ դատարանում:**
16. **Հաշտարարությունը քաղաքացիական դատավարությունում:**
17. **V. Ավարտական աշխատանքների թեմաների ցանկ**
18. **Ապացուցման գործընթացը ֆ դրա փուլերը քաղաքացիական դատավարությունում:**
19. **Դատական ենթակայությունը ֆ ընդդատությունը ՀՀ քաղաքացիական դատավարությունում:**

20. Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտները ՀՀ քաղաքացիական դատավարությունում:
21. Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր ՀՀ քաղաքացիական դատավարությունում:
22. Վկայիցուցմունքը քաղաքացիական դատավարությունում:
23. Փորձագետի եզրակացությունը ֆ նրա տեսակները քաղաքացիական դատավարությունում:
24. Դատախազի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը:
25. Հատուկ հայցային վարույթը ֆ նրա իրավակարգավորումները քաղաքացիական դատավարությունում:
26. Հատուկ վարույթը ֆ նրա իրավակարգավորումները քաղաքացիական դատավարությունում:
27. Դատական ակտերի նոր երֆան եկած ֆ նոր հանգամանքներով վերանայման վարույթը:
28. VI. Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ
29. Իրավական ակտեր
30. Մարդու իրավունքների ֆ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (1950):
31. Քաղաքացիական դատավարության հարցերով կոնվենցիա (1954):
32. ՀՀ Սահմանադրություն (2015):
33. ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք (2018):
34. ՀՀ Սահմանադրական օրենք Դատական օրենսգիրք (2018):
35. ՀՀ օրենքը «Դատախազության մասին» (2017):
36. ՀՀ օրենքը «Փաստաբանության մասին» (2004, փոփոխ. 06.01.2022):
37. ՀՀ օրենքը «Հաշտարարության մասին» (2018):
38. ՀՀ օրենքը «Կատարողական վարույթի մասին» (2024):
39. ՀՀ օրենքը «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» (2005, փոփոխ. 01.03.2023):
40. ՀՀ օրենքը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» (2020):

41. **Մասնագիտական գրականություն**
42. **Դավթյան Ա.Ք., Քաղաքացիական դատավարություն: Ուսում. ձեռնարկ, 2-րդ հրատ., Երյան, 2012:**
43. **Դավթյան Ա.Հ., Քաղաքացիական դատավարություն: Ուսում. ձեռնարկ, 2-րդ հրատ., Երյան, 2007:**
44. **Դավթյան Ա.Հ., Դատական իշխանության կազմակերպումը ՀՀ սահմանադրական բարեփոխումների արդի հայեցակարգի ներքո: Երյան, 2015:**
45. **Զորաբյան Ա., Ապացուցման միջոցների հիմնահարցերը ՀՀ քաղաքացիական դատավարությունում, Երյան, 2013:**
46. **Մեղրյան Ս., Ապացուցումը յ ապացույցները ՀՀ քաղաքացիական դատավարությունում, Երյան, 2020:**
47. **Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները Հայաստանում, Երյան, 2013:**
48. **Հակոբյան Ա.Ա., Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր. պատմա-տեսական յ իրավական վերլուծություն, Երյան, 2018:**
49. **Актуальные проблемы гражданского и административного судопроизводства.**Подред. В.В. Яркова. М.,2021.
50. **Айрапетян Ю.В.** Актуальные проблемы доступности правосудия в гражданском процессе Армении. Учебное пособие., Ереван, 2017.
51. **Борисова Е.А.** Проверка судебных актов по гражданским делам. М., 2006.
52. **Бодров С.Ю.** Судебный прецендент в системе источников российского права: вопросы теории и практики. Автореф.дис.канд.юрид.наук. Ульяновск, 2004.
53. **Воронцова И. В.** Нормы международного права как источник гражданского процессуального права. Автореф.докт.дисс .М., 2015,
54. **Гражданский процесс. Хрестоматия.** Под ред. М.К.Треушникова. М., 2005.
55. **Гражданское процессуальное право России.** Учебник под ред. Тумановой Л.В., М., 2015.
56. **Гражданский процесс.** Учебник. Под ред. ТреушниковаМ.К., 2021.
57. **Гражданский процесс.**Учебник под ред. Яркова В.В. М., 2022.

58. **Гражданское процессуальное право России.** Учебник. Под ред. М.С.Шакарян. М., 2002.
59. **Гражданский процесс зарубежных стран.** Учебное пособие для вузов. Изд.-во “Проспект”.Под ред.А.Г. Давтян. М., 2011.
60. **Гук П. А**. Судебная практика как форма судебного нормотворчества в правовой системе России: общетеоретический анализ. Автореф.дис.докт.юрид.наук. М., 2012.
61. **Давтян А.Г.** Гражданский процесс в Германии и странах СНГ. Изд.-во “Наапет”, Ереван, 2000.
62. **Давтян А.Г.** Гражданское процессуальное право Республики Армения: состояние, тенденции развития и перспективы. Сборник научных трудов, посвященных 70-летию юридического факультета, Ереван 2003. С. 71.
63. **Давтян А.Г.** Состязательность правосудия по гражданским делам: проблемы эффективности и пути развития в Респулике Армения. Сборник научных статей Седьмой годичной коференцииРоссийско- Армянского (Славянского) университета. Ереван, 2013. С. 22-27.
64. **Давтян А.Г.** Эволюция источников гражданского процессуального права Республики Армения. Вопросы теории и практики. Сборник научных статей восьмой годичной научной конференции РАУ Ереван, 2014. С.104-106.
65. **Давтян А.Г.** Развитие теории принципов в гражданском процессуальном праве РА. Заметки о современном гражданском и арбитражном процессуальном праве. Москва, 2004. С. 247-256.
66. **Жуйков В.М.** Проблемы гражданского процессуального права. М., 2001.
67. **Исполнительное производство.**Ответств. ред. В.В. Яркова, М., 2023.
68. **Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации.** Под общ. ред. В. В. Яркова. 5 - е изд., перераб. и доп. М., 2021.
69. **Комментарий к Федеральному закону «Об исполнительном производстве».** Под ред. В. В. Яркова. 3-е изд., исправ. и доп. М., 2022.
70. **Треушников М.К.** Судебные доказательства в гражданском процессе. М., 2021.

71. **Тунян А.Г.,** Проверка судебных постановлений в гражданском процессе государств-участников СНГ – Раздел «Армения», Проверка судебных постановлений в гражданском процессе стран ЕС и СНГ: монография, 2-е изд., перераб. И доп. /под.ред. Борисовой Е.А.- М.: НОРМА, 2012, стр. 477-507.
72. **Фархтдинов Я.Ф.** Источники гражданского процессуального права Российской Федерации. Казань, 2001; Фархтдинов Я.Ф. Источники гражданского процессуального права Российской Федерации: Автореф. дис. ... докт. юрид. наук. Екатеринбург, 2002.

Դատականակտեր

73. ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով որոշումների ընտրանի: Հատոր XIV, Երևան, 2020: